

1.2.8. Կազմակերպությունների ֆինանսական գործունեությունը⁹

Ծրագրով նախատեսված սույն ոլորտի թվով 6 աշխատանքներից (128001-128006 ծածկագրեր) 2-ը եռամսյակային և 4-ը տարեկան պարբերականությամբ կատարվել են սահմանված ժամկետներում և պարբերականությամբ:

2004 թվականին տվյալների հավաքագրումն իրականացվել է ընտրանքային մեթոդով վիճակագրական մոնիտորինգում ընդգրկված կազմակերպություններից պետական վիճակագրական հաշվետվությունների հավաքագրման միջոցով: Կազմակերպությունների ընտրանքը կատարվել է ՀՀ ԱՎԾ բիզնես-ռեգիստրի 8212 գործող կազմակերպություններից բաղկացած արդիականացված բազայի հիման վրա:

Կազմակերպությունները, համաձայն «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցման մասին» ՀՀ օրենքի հոդված 2-ի, ըստ աշխատողների թվաքանակի որոշվող չափերի՝ բաժանվել են 2 խմբի՝ խոշոր ու միջին կազմակերպություններ և փոքր ու գերփոքր կազմակերպություններ: 1176 խոշոր և միջին կազմակերպությունները հետազոտվել են համատարած, իսկ փոքր և գերփոքր կազմակերպություններից (ընտրանքի գլխավոր համակցությունից) շերտավորված ընտրանքի մեթոդով՝ ըստ մարզերի, հիմնական գործունեության տեսակի և աշխատողների միջին ցուցակային թվաքանակի ընտրվել են 902 կազմակերպություն: Հետազոտված փոքր և գերփոքր կազմակերպությունների տվյալները տարածվել են ընտրանքի գլխավոր համակցության վրա: Նախապես ճշգրտվել են ընտրանքում ընդգրկված կազմակերպությունների գործունեության հիմնական տեսակի ծածկագրերն ըստ ՏԳՏԴ-ի:

Կատարվել են պետական վիճակագրական հաշվետվությունների տվյալների մուտքագրման, մշակման, տվյալների տարածման և ամփոփի ելքային աղյուսակների ստացման համար ծրագրի տեխնիկական առաջադրանքի լրացումներ, որոնց հիման վրա ավարտին է հասցվել տվյալների մշակման համակարգչային ծրագիրը:

⁹ Տես՝ Ծրագիր, Հավելված I: